ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

Ք.Գավառ 15.01.2025թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ս. Մանուկյան, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>>ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Մ. Մուսոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա , այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2024թ. դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տրվող բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին,, հոդվածով 23750,4 հազ. ՀՀ դրամ գումարը հատկացնում է կատարողին:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է Գեղարքունիքի երկլագիտական թանգարանին՝ թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ կազմակերպելու համար, ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:

1.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2. Հաշվետվությունը

2.1. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.5. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

3. Նվիրաբերության տրամադրման պայմանները

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:

3.3. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ֆորս-մաժոր/

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. Այլ դրույթներ

5.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ	Գեղարքունիքի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ
Ք. Գավառ	ՀՎՀՀ 08400689
ՀՎՀՀ 08428824	Գանձապետական հ/հ 900178000148
ՀՀ 900171078505	
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	
Գլխավոր քարտուղար՝	
Ս.Մանուկյան	Տնօրեն Մ. Մուսոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

,,Գեղարքունիքի երկրագիտական թանգարան" ՊՈԱԿ-ին 2024թ. տրամադրվելիք

գումարներն ըստ ամսական բացվածքի

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կազմակերպում

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)՝աճողական
1	Հունվար	-
2	Փետրվար	3166,7
3	Մարտ	4750,0
4	Ապրիլ	7125,1
5	Մայիս	9500,1
6	Հունիս	11875,2
7	Հուլիս	13458,5
8	Օգոստոս	15041,9
9	Սեպտեմբեր	16625,2
10	Հոկտեմբեր	19000,3
11	Նոյեմբեր	21375,3
12	Դեկտեմբեր	23750,4

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՀՀ ՖՆ Գործառն. վարչ.

ՀՎՀՀ 08428824 ՀՀ 900171078505

Գլխավոր քարտուղար՝

Ս.Մանուկյան

Կ ա տ ա ր ո ղ

Գեղարքունիքի երկրագիտական

թանգարան ՊՈԱԿ

ՀՎՀՀ 08400689

Գանձապետական հ/հ 900178000148

Տնօրեն՝

Մ. Մուսոյան